

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

15 դեկտեմբերի 2018թ.
ք. Երևան

N 174-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ԹԵԿՆԱԾՈՒ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության տարածքային ընտրական ցուցակի թեկնածու Գեղամ Բաղդասարյանի 13.12.2018թ. թվագրված դիմում Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Բողոքաբերների իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

2018թ. դեկտեմբերի 14-ին ժամը 16-ի սահմաններում կենտրոնական ընտրական հանձնաժողով առձեռն ներկայացվել է փակ ծրար, որում առկա է եղել նույն դիմումից երկու օրինակ: Դիմումը ներկայացնողը ներկայացել է որպես «Բարգավաճ Հայաստան» կուսակցության տարածքային ընտրական ցուցակի թեկնածու Գեղամ Բաղդասարյանի վարորդ: Ծրարում առկա դիմումի տակ առկա է 13.12.2018թ. ամսաթիվը:

Ներկայացված դիմումով նշվում է, որ սույն թվականի դեկտեմբերի 9-ին կայացած ԱԺ արտահերթ ընտրությունների քվեարկությունների հետ կապված ձեռք ենք բերել տվյալներ, որոնք փաստում են այն մասին, որ ունենք ընտրախախտումների դեպքեր Շիրակի մարզի 30/6, 31/5, 31/8, 31/11, 31/31, 32/5, 32/8, 32/29,32/31,33/49 ընտրատեղամասերում, երբ ՀՀ քաղաքացիները քվեարկել են իմ օգտին, սակայն ձայները հաշվարկվել են կամ այլ թեկնածուների օգտին կամ ճանաչվել են անվավեր: Քանի որ մեր ձեռքի տակ եղած տվյալները ձեռք են բերվել բողոքարկման համար սահմանված ժամկետից հետո, ուստի խնդրում եմ Ձեր վերադաս հանձնարարականը վերաբացել վերը նշված բոլոր ընտրատեղամասերի պարկերը և կատարել վերահաշվարկ: Նշեմ, որ վերոնշյալ տվյալները, որոնք ունեմ, չեմ հրապարակում, քանի որ մտավախություն ունեմ, որ փորձ կարվի այդ ընտրախախտումները ներքին կարգով շտկել, խնդրում եմ Ձեր անմիջական միջամտությունն այդ գործում:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կամ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ վստահված անձը, եթե նրանք ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) դիմում:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն»:

Վկայակոչված իրավանորմով հստակ սահմանված են այն սուբյեկտները, որոնք իրավասու են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ներկայացնել տեղամասում քվեարկության արդյունքի վերահաշվարկի վերաբերյալ դիմումներ: Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կարող է ներկայացնել վերահաշվարկ կատարելու դիմում, եթե ներկա է եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը: Ներկայացված դիմումից պարզ չէ անգամ, որևէ տեղամասում դիմումատուն ներկա գտնվել է արդյոք ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը:

Նշված նորմը սահմանում է նաև հստակ ժամկետներ, որի ընթացքում հնարավոր է ներկայացնել նման դիմումներ: Նշված ժամկետն է՝ 10.12.2018թ. ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ը և 11.12.2018թ-ին ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն: Նշված ժամկետները հստակ ամրագրված են նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված և համացանցային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցում՝ կետ 98:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետները երկարաձգելու, բաց թողնված ժամկետները վերականգնելու որևէ ինստիտուտ կամ իրավական հնարավորություն նախատեսված չէ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու

պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Սահմանադրական դրույթը սահմանում է իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց իրավասությունների իրացման շրջանակը՝ բացառելու համար իշխանության չարաշահումը կամ իշխանազանցությունը: Եթե ֆիզիկական անձինք իրավունք ունեն անելու այն ամենը, ինչն օրենքով արգելված չէ, ապա մեկնաբանվող հոդվածի օբյեկտները (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք) կարող են կատարել այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Դա պայմանավորված է առաջին հերթին իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքով:

Նշված իրավանորմի պահանջներից ակնհայտ է, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովը լինելով պետական մարմին կարող է ընդունել այնպիսի որոշումներ, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքը չի սահմանել լիազորություն կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար սահմանելու դիմումումների ընդունելության նոր ժամկետներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության տարածքային ընտրական ցուցակի թեկնածու Գեղամ Բաղդասարյանի 13.12.2018թ. թվագրված դիմումը՝ մերժել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԸ**

S. Մուկուչյան